

Հաստատում եմ

«Մեհրաբյանի անվան բժշկական
քոլեջ» ՄՊԸ տնօրեն

Լ. Մեհրաբյան

« 04 » 04 2022 թ.

Կ Ա Ր Գ

«Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջ» ՄՊԸ բժշկական քոլեջի նախորդ տարիների շրջանավարտների պետական նմուշի դիպլոմ ստանալու համար ամփոփիչ ատեստավորման քննությունների կազմակերպման

1. Սույն կարգով սահմանվում է “Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջ” ՄՊԸ բժշկական քոլեջի (այսուհետ՝ ՄՈՒՀ) նախորդ տարիների շրջանավարտների պետական նմուշի դիպլոմ ստանալու համար ամփոփիչ ատեստավորման քննություններ հանձնելու ընդհանուր պայմանները:
2. Շրջանավարտների ըստ միջին մասնագիտական կրթական ծրագրերի մասնագիտությունների, ամփոփիչ ատեստավորման քննությունների հանձնումը կազմակերպվում է ըստ քննությունների անցկացման ժամանակացույցի:
3. Պետական նմուշի դիպլոմ ստանալու համար նախորդ տարիների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման քննությունների կազմակերպման ու անցկացման նպատակով ՄՈՒՀ-ը հաստատում է քննությունների կազմակերպման ընթացակարգն ըստ մասնագիտությունների:
4. Ամփոփիչ ատեստավորման քննություններ հանձնելու նպատակով շրջանավարտները, մինչև տվյալ ուսումնական տարվա հունիսի 7-ը, ՄՈՒՀ են ներկայացնում՝
 - ա. քննությունների մասնակցության մասին դիմում-հայտ;
 - բ. անձը հաստատող փաստաթղթի բնօրինակը և պատճենը;
 - գ. դիպլոմի և ներդիրի բնօրինակը և պատճենը;
 - դ. 2 լուսանկար 3x4 չափի:
5. Սույն կարգի 3-րդ կետում նշված քննությունները կազմակերպելու և անցկացնելու նպատակով ՄՈՒՀ-ը շրջանավարտներից գանձում է ծառայության վճար.
 - ա. եթե շրջանավարտը դեռևս պատրաստ չէ տվյալ դասընթացի ամփոփիչ ատեստավորմանը մասնակցելու, շրջանավարտի ցանկությամբ, ՄՈՒՀ-ը հնարավորություն է ընձեռնում ազատ ունկնդրի կարգավիճակով մասնակցելու տվյալ մասնագիտության դասընթացների տեսական և գործնական

պարապունքներին՝ ստանալով համապատասխան խորհրդատվություն և վճարելով այդ կիսամյակի համար ՄՈՒՀ-ի սահմանած ուսման վարձը;

բ. եթե շրջանավարտը պատրաստ է մասնակցելու տվյալ դասընթացի ամփոփիչ ատեստավորմանը, ապա ՄՈՒՀ-ի դրամարկղ մուծում կամ հաշվի համարին փոխանցում է 45000 (քառասունհինգ հազար) դրամ, ստանում համապատասխան խորհրդատվություն և սահմանված ժամկետում ներկայացնում քննությանը:

6. ՄՈՒՀ-ի համապատասխան մասնագիտության գծով ձևավորվում է միասնական ամփոփիչ ատեստավորման հանձնաժողով, որը գործում է ոչ ուշ, քան քննությունները սկսվելուց երկու շաբաթ առաջ և միայն տվյալ ուսումնական տարվա համար նախատեսվող քննաշրջանի ժամկետներում:
7. Յուրաքանչյուր մասնագիտության գծով ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահին նշանակում է ԿԳՄՍ նախարարությունը, իսկ անդամներին նշանակում է ՍՊԸ տնօրենը՝ ՄՈՒՀ-ի հաստիքային աշխատողների կազմից:
8. Ամփոփիչ ատեստավորման քննություններն անցկացվում են բանավոր, իսկ համապատասխան հարցման թերթում շրջանավարտը պարտադիր գրի է առնում իր պատասխանը հետագա բողոքարկմանը ներկայացնելու համար:
9. Յուրաքանչյուր առարկայից ամփոփիչ ատեստավորման քննության տևողությունը չպետք է գերազանցի 30 րոպեն: Քննությունների արդյունքները գնահատվում են գերազանց, լավ, բավարար, անբավարար և հաստատվում են նույն օրը՝ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստի արձանագրության կազմումից հետո:
10. Ամփոփիչ ատեստավորման քննություններից դրական գնահատական ստացած շրջանավարտին, հանձնաժողովի որոշմամբ, շնորհվում է ստացած մասնագիտությանը համապատասխան որակավորում: Հանձնաժողովի աշխատանքների ավարտից հետո հանձնաժողովի նախագահը մեկ շաբաթվա ընթացքում հաշվետվություն է ներկայացնում նախարարություն՝ նախարարության կողմից տվյալների ամփոփման և ՄՈՒՀ-ի պետական նմուշի դիպլոմի շնորհման համար:
11. Ամփոփիչ ատեստավորման քննություններից անբավարար գնահատական ստացած շրջանավարտին նույն ուսումնական տարվա ընթացքում քննությունների վերահանձնում չի թույլատրվում: